ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
14 օգոստոսի 2024 թվական, N 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15.07.2020Թ. ԹԻՎ 55-Ա ՈՐՈՇՄԱՆ 4-ՐԴ ԿԵՏԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներով 19.07.2024 թվականին կազմված թիվ 1 արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ կետերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 38-րդ հոդվածի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Անվավեր ճանաչել և վերացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 15.07.2020թ. թիվ 55-Ա որոշման 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մասին հակասելու հիմքով:
2. Հանձնարարել և լիազորել Ալավերդի համայնքի ղեկավարին՝
   2.1 Անվավեր ճանաչել և վերացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 15.07.2020թ. թիվ 55-Ա որոշման 4-րդ կետի հիմքով Ախթալա համայնքի ղեկավարի կողմից 31.08.2020թ-ին կայացրած թիվ 163-Ա որոշումն ու ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, Շամլուղ քաղաք հասցեում գտնվող թիվ 06-005-0306-0026 ծածկագրով 1.0 հա հողամասի աճուրդ-վաճառքի հիմք հանդիսացած բոլոր իրավական ակտերը:
   2.2 Սույն որոշման 2-րդ կետի 2.1 ենթակետով սահմանված հանձնարարությունը կատարելուց հետո, սեղմ ժամկետներում, դիմել Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ օրենքի խախտմամբ այլ անձի անունով գրանցված իրավունքի պետական գրանցումը վերացնելու և հողամասի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականությունը գրանցելու նպատակով:
   2.3 Կադաստրի կոմիտեի կողմից հողամասի նկատմամբ այլ անձի անունով գրանցված իրավունքի պետական գրանցումը վերացնելու և հողամասի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականությունը գրանցելու դիմումը մերժելու դեպքում՝ Ալավերդի համայնքի իրավունքների պաշտպանությունն իրականացնել դատական կարգով:

2.4 Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
5.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
6.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
7.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
8.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
9.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
10.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
11.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
12.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
13.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
14.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
15.	ՏԻԳՐԱՆ	ՊԱՊՈՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., օգոստոսի 14,
Լոռու մարզ, ք. Ալավերդի